Գործունեության հաշվետվություն և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2021թ

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Կազմակերպության գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն	6
Կազմակերպության գործունեության հաշվետվություն	6

MELIKYANS & CO

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առողջ կյանքի ուղի» բարեգործական ՀԿ խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Առողջ կյանքի ուղի» բարեգործական Հասարակական Կազմակերպության (այսուհետ Կազմակերպություն) 2021թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընդգրկող ժամանակաշրջանի գործունեության հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն):

Կազմակերպության ղեկավարությունը ֆինանսական հաշվետվությունը կազմել է հիմք ընդունելով նաև «Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 15 փետրվարի 2019թ.-ի թիվ 102 -ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջների վրա:

Մեր կարծիքով՝ կից ներկայացված հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2021 թվականի տարեկան մուտքերի ընդհանուր գումարը և ստացման աղբյուրը: ինչպես նաև դրամական միջոցների օգտագործման, կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերը՝ համաձայն «Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 15 փետրվարի 2019թ.-ի թիվ 102 -ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար.

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով

էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան

MELIKYANS & CO

դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար.

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն,

MELIKYANS & CO

ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արամ Մելիքյան

Տնօրեն՝

Ռոբերտ Մելիքյան

Առաջադրանքի պատասխանատու

Աուդիտոր՝

18 ապրիլ 2022թ.

Կազմակերպության գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Առողջ կյանքի ուղի» բարեգործական Հասարակական Կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է 2009 թվականին (211.171.05015, գրանցված՝ 2009-03-20-ին, ՀՎՀՀ՝ 01244139): Ընկերության գործունեության հասցեն է - 0054 ՀՀ ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, 41/8, իսկ իրավաբանական հասցեն՝ ՀՀ. ք. Երևան, Դավթաշեն 4թ 2Ա շենք, բն. 40:

«Առողջ կյանքի ուղի» բարեգործական Հասարակական Կազմակերպությունը ներկայացնում է «Ավագ» բժշկական կենտրոնը, որը համաձայն ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից 05/09/2018թ-ին ստացված թիվ N Կ-ԲՕ-002448 Լիցենզիայի իրականացնում է բժշկական օգնություն և սպասարկում:

2019թ-ին Բժշկական կենտրոնը ընդլայնել է ծառայությունների շրջանակը ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից 28/11/2019թ-ին ստացված ԼԻՑԵՆԶԻԱ թիվ Կ-ԲՕ-002653 հիման վրա:

Բժշկական կենտրոնի գործունեության հասցեն է՝ ՀՀ. ք. Երևան, Դավթաշեն 4թ., 41/8:

Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը 2021թ. կազմել է 74 մարդ:

Կազմակերպության գործունեության հաշվետվություն

Բժշկական կենտրոնը 2021թ.-ին ՀՀ Առողջապահության նախարարությունից ստացել է ֆինանսավորում, ըստ որի բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում պարտավորվում է ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում:

Համաձայն հաստատված 28/12/2020թ ՀՀ Առողջապահության նախարարության հետ կնքված N ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-519 պայմանագրի Հավելված 2-ով (վերջին փոփոխություն Համաձայնագրի N 519-4) սահմանվել են հետևյալ ֆինանսավորումները՝

Դրամ		2021թ.
1	ՀՀ Առողջապահության նախարարություն, այդ թվում՝	
	• Անհետաձգելի բժշկական օգնություն	2,392,330
	• Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնություն	10,294,030
	Ընդամենը՝	**12,686,360**

Մեր կողմից ուսումնասիրվել են 2021 թվականին կատարված մուտքերի և ելքերի/ծախսերի տրամադրված հիմնավորումները:

Մուտքեր- 11,125,400 դրամ,

Դրամ		2021թ.
1	ՀՀ Առողջապահության նախարարություն, այդ թվում՝	
	• Անհետաձգելի բժշկական օգնություն	1,515,800
	• Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնություն	9,609,600
	Ընդամենը՝	**11,125,400**

Ելքեր/Ծախսեր- 5,750,866 դրամ

Դրամ		2021թ.
1	Աշխատավարձ, այդ թվում՝	**2,606,212**
	• Պետպատվերի շրջանակում	2,084,998
	• Համավճարով	521,214
2	Նյութածախս	**2,541,538**
3	Կոմունալ ծախս	**603,116**
	Ընդամենը՝	**5,750,866**

Դեբիտորական պարտքը (չփոխանցված ֆինասավորման մնացորդը) 31 դեկտեմբեր 2021թ-ի դրությամբ կազմել է՝ 437,800 դրամ, որն ամբողջությամբ ստացվել է 2022թ փետրվարին:

Բոլոր հիմքերը առկա էին և ձևակերպված էին 31 դեկտեմբեր 2021թ-ի դրությամբ:

Ծրագիրը չի ավարտվել և շարունակվելու է 2022թ-ին:

«Մելիքյանս ընդ քո» ՍՊԸ
Արամ Մելիքյան
Տնօրեն՝

Ռոբերտ Մելիքյան
Առաջադրանքի պատասխանատու
Աուդիտոր՝

18 ապրիլ 2022թ.